

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՇԱՐԱԿԱՆԱՑ

Ժ) Պետոս Գեաղարձ (1019 Յ. Ք.), զհանգստեան շարականոն, զմարտիրոսաց և զբազումս 'ի մանկության, Առ հասարակ շարականներ ջանկուժ ամէնքի մասին էլ այդպէս ընդհանրապէս է խօսուած:

Թէև այստեղ Հանգստեան բոլոր շարականները Պետոս Գեաղարձին է վերագրուած, բայց քիչ յետոյ Յակովբ Սանահնեցու մասին յիշելիս նորան է տալիս Վանակզրնական ծոցոյ Հանգստեան շարականը. իսկ Վարապետի որոտմամբ, որ Սարգիս Սևանհեցունն է, նոյնպէս հանգստեան շարական է, Հանգստեան շարական ունի նաև Ն. Ծնորհալին ՎՋ անեղ տնժամանակ: Ուրեմն սխալ է բոլոր հանգստեան շարականները Պետոս Գեաղարձին վերագրելը:

Եթէ ննջեցեաց բոլոր շարականների հեղինակ ժիայն Պետոս կաթողիկոսին համարենք, այն ժամանակ կը հնաեւի, որ նորանից առաջ ննջեցեաց կարգ չի եղել, յիշատակութիւն չի եղել և՛ հանգուցեաց համար երգեր չեն հիւտուել կամ եթէ յիշատակութիւն եղել է, առանձին երգեր չի ունեցել Մինչդեռ այդպէս չէ. նոյն իսկ հանգստեան շարականներից պարզ գրուածները հնութիւն են, մի անգամ էլ այս մասին մատնացոյց եղալ սկզբում: Օրոյնակ, քահանայի թողման կարգի մէջ կայ «գալացի է միտինն» (էջ 660). «Պատրաստ արարեր առաջի իմ գոեղան, ակն յանդիման նեղչաց իմոց» (էջ 661). «Օծեր իւղով զգլուխ իմ, բաժակ քո որպէս անուպակ արեցեց զիս» (էջ 661). «Ողբոյն» (էջ 664), որոց համար յիշատակուեցաւ դրութեանն էջում:

Ուրեմն Պետոս Գեաղարձից առաջ այլ հեղինակներէ հանգստեան կամ ննջեցեաց ձօնուած շարականներ երգուել են, բայց որոնց անունները մեղ յայտնի չեն. գուցէ Գեաղարձը ննջեցեաց շարականները կարգի է դրել և ինքն էլ շատ երգեր հիւտել և անշարքի է, բայց իւր անունը մնացել է բոլորի վերայ:

Պետոս Գեաղարձին չի կարելի վերագրել Վարապի Աճ 653, «Հայր անտխակա» 654, «Եի գիշերաց կանխե» 660, «Որ հայրդ ես» 660, «Հայր բարեգութ» 667, «Որ խոնարհեցար յերկնից բանդ Աճ» 678, «Ի հանգիստ» 678:

Եթէ հանգստեան շարականներից մեր վերոյիշածները Պետոս կաթողիկոսին չեն պատկանում, ապա ուրեմն, հանգըստեան բոլոր շարականները սխալ է ամբողջապէս Գեաղարձին վերապահել: Մի հղարակացութիւն ևս այն է, որ շատ հնուց հանգստեան շարականներ եղել են:

Գեաղարձի գրչին պատկանաւ երգեր կարելի է մատնացոյց լինել հետեւեալների վերայ. «Ահաքին է օրն դատաւ տանի» էջ 682, «Անսկիզբն Աճ» 683, «Թաղաւար փռուց քո. յոյս աղբի մարգկան» 689, Կ. ընդհանրապէս այն շարականները, որոնց մէջ ներկայացուած են վերջին դատաւարներ, հրկորդ գալուստն, արդարների և մեղաւորների վիճակը ևն. Այս շարականների այս բովանդակութիւն ունենալն էլ կապ ունի հաղարմեակի գաղափարի հետ, որովհետեւ Տասներորդ դարու վերջերը տարածուած էր այն գաղափարը թէ Քի. ծնունդից ուղիղ 1000 տարի յետոյ Նեաւ պիտի երևի և ապա քո. հրկորդ անգամ քոյ աշխարհ և լինի վերջին դատաւարն: Այս գաղափարը աւելի հաստատուած էր արեւի խուարումներով, երկրաշարժներով և սովերով: Բոլոր այս նշանները ժամանակակից քրիստոնեաներին ստուգումն և ան էին աղգում: Հետև չէ, որ Գեաղարձն էլ նոյն գաղափարը լինել ընդունած թէ 1000 տարին յոյնալուն պիտի լինի բ. գալուստը, ուստի և իւր շարականներով մտադիր էր ներկայացնել զժողով իւր արդարափնեքով և արքայութիւնը իւր արքայութիւններով, և այսպիսով յաղորդութիւն անել քրիստոնէական շաղկից հեղաշարժներին: Հարկաւ այս գաղափարները աւելի զգուշ և աղքատիկ կը լինէին ննջեցեացի թագ-

ման ժամանակ հաւատումների վերայ: Ահա մի քանի խօսքեր այդ շարականներից. «Ահագին է օրն գառաօտանի, բորբոքի գնհանն, գալարին երկինք, գերադոյն գոչ է փողն Գարբէլէտոն, սասանի երկիր, հուր բորբոքեալ ընթանայ, բոցակիզէ զմեղաւորոն, նորափետուր զարդուրին դասք սրբոցն ... ուրախութեամբ մտանին 'ի յառագաստ փեսային» և այլն, և այլն: Ահա թէ ինչպէ՞ս էր երևակայում ժամանակակից քրիստոնեան դժոխքը:

ԺԱՒ Գրիգոր Մագիստրոս (1044 Յ. Բ.), «Ջորս ըստ պատկերին, զոր այլք իսահակայ Ձորափորեցւոյ տան: «Ջորս ըստ պատկերին ո'չ Սահակ Ձորափորեցունն է և ո'չ էլ Մագիստրոսինը, այլ ինչպէս ժառանգորական ցուցումներէից գիտենք, գրել է Աշոտ պատրիկը: Թէ ի՞նչ հանգամանքն է առիթ տուել այս երգը Մագիստրոսին վերագրելու բացատրենք:

Չամէհանը այս մասին վանական վարդապետի «Ճառ Հարցմանց»-ից աւանդում է, թէ Գրիգոր Մագիստրոսը և որդին՝ Գրիգոր վկայասէր Տարօնում եկեղեցի են շինում և մի պատկեր բերելով դնում են այդտեղ և երկուսն էլ յօրինում են «Ջկենդանագիր անարատ ծնողի քո» և «Ջորս ըստ պատկերին» և «Որ զարդարեաց», որից քաղելով Տաթևացին դնում է «Գիրք Հարցմանց»-ի մէջ:

Ասողկան պատմութեան բ. գրքի մէջ չորրորդ գլխում գրում է. «... Աշոտ պատրիկ ..., որ շինեաց զեկեղեցին Դարենից և զկենդանագիր պատկեր մարդեղութեան Գի. ամէր 'ի մտիցն արեւու մեծասքանչ զօրութեամբ և հանգուցանէր 'ի նա յորոյ զեկեղեցին անուանեաց յառնւար» (էջ 125, ապ. Փարիզ, 1859 թ.), իսկ վարդան Բարձրբերդցին աւելի հանգամանորէն է պատմում. «... շինեաց (պատրիկ) ԳԴարօնի եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր երեք սրգի նորա 'ի մտիցն արեւու մասամբ և 'ի նաւակատիսն զրեաց «Ջորս ըստ պատկերին» (վարդ. Բարձ., էջ 99): Մատենագիրներից տեսնում ենք ահա, որ այդ երգը Պատրիկի գրածն է, բայց ո՞ր հանգամանք առիթ է տուել կարծելու որ Մագիստրոսի օրինան է, և այդ հանգամանքը հետև-

եալն է: Այս եկեղեցին աւերուելուց 300 տարի յետոյ, Գրիգոր Մագիստրոսը այս պատկերը փոխադրում է Հաւուց Թառ (մերձ ի Գառնի), իւր նոր շինած եկեղեցին և երգում է «Ջորս ըստ պատկերին» (պատրաստի) շարականը, որից հետեցրել են (վանական վրդ., Տաթևացի և Չամէհան) թէ Գ. Մագիստրոսն է գրել այդ երգը:

Յովաննէս Եպիսկ. Շահաթունեան «Ստորագրութիւն Կաթողիկէ էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ» գրքում թուելով Ս. էջմիածնի սրբութիւնները՝ այս պատկերի մասին ասում է՝ թէ Պատրիկի շինած եկեղեցու աւերակները այժմ էլ կան Հին Բայազետի մօտ, որը այժմ էլ «Ամենափրկիչ» անունն է կրում ժողովրդից: Շահաթունեան իւր գրքում յառաջ է բերում և արձանագրութիւններից որքան որ ընթանալի են. մենք ևս յառաջ կը բերենք, որպէսզի այս երգի և արձանագրութեան մի անձի պատկանիլը պարզ լինի:

Ըի հիւսիսային որմն եկեղեցւոյ 'ի պատրկութեան ... իշխան հայոց ազգի ... ինքնաշուն կենակցութեան ... և 'ի հանդերձեալ քո գալստիան «Յորմն հարաւային» 'ի մագած մտիցն արեւու ամեալ պարգեւեալ մեզ հանճեցար որ յամենայնի ... (Հատոր Ա., էջ 62):

Մագիստրոսի արձանագրութեան մէջ ընթեռնի է. «Ընծայեցաք զհայրենիքս մեր ... նորոգեալ վերստին հաստատեցաք զսուրբ ուխտս վերջին քան զառաջինս (իրենը քան թէ Աշոտինը) աստ եղաք զվէմն հաւատոյ հիման Ս. Եկեղեցւոյ» (Հատոր Բ., էջ 293):

Կարելի է ասել թերեւ որ Մագիստրոսը պատկերը փոխադրելու ժամանակ երգելով «Ջորս ըստ պատկերին» մի քանի տներ է աւելացրել: Մեր այս ենթադրութիւնը հաստատուում է նրանով, որ տների մէջ մի իրական կապ չկայ. այսպէս օրինակ առաջին տան մէջ կարդում ենք «տաճար», երկրորդի մէջ՝ «կենդանագիր», երրորդի մէջ՝ «առաջի մասին խնդրածք», չորրորդում՝ «տաճար»: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ շարականն աղաւաղուել է, նոյնիսկ տներ է պակասել, բ. տան

մէջ ճուր եղին զվէմն հաւատոյն նախընթաց նախադատութեան հետ չի կապուում, որովհետեւ սա նախադատութիւնը պատկանում է «տաճար»ին: Աւելի պարզ լինելու համար ամբողջապէս յառաջ բերենք: Կանոն հինգերորդ տւումը (Վերացման Ս. Խաչի):

1. Զորս ըստ պատկերի քում ստեղծեմ, նորոգելով քեզ տաճարացուցեմ, զնորոգեալս 'ի մէջ զտաճարս ընկալ' քեզ 'ի բնակութիւն:

2. Որ շնորհես մեզ կենաց տուող ըզկենդանադէր քո ծառայական տիպի, բերելով զբոլորից զվերբերողդ 'ի փառս տուր Երրորդութեանդ:

3. Կեցո զորդի ծառայի քո, զոր 'ի Հռովմայ գահիցն վերապատուեցեմ, ուր եղին զվէմն հաւատոյն հիման Ս. Եկեղեցւոյ:

4. Որ զվերջինս գոյս հրաշս զարդեցեմ, քեւ փափ բնակցութեամբ հիմնափայլեցեմ զպանծալի ե զփայլեալ զփառս տանս այս վերջինս քան զառաջինս:

Վերջին տունը հաւանորէն Մագիստրոսին լինի, որովհետեւ այդ տան ընդգծած բառերը կան եւ Մագիստրոսի եկեղեցու արձանագրութեան մէջ:

Ինչ վերաբերում է «զոր 'ի Հռովմայ գահիցն վերապատուեցեմ» խօսքերին, կ'ասենք, որ դա ճարտասանական մի սճի նմանութիւնը ունի, որովհետեւ Ղեռնդի ասելով՝ Սմբատը (Աշոտի որդին) այդ պատկերը Բիւզանդիոսից է բերել:

Հնդուսելով, որ այս երգը Աշոտ Պարթիկի գրածն է եւ Մագիստրոսի ձեռքով յաւելուած, պէտք է աւելացնեմ, որ այս երգը Եկեղեցու երգ է եւ ոչ թէ Խաչի, ինչպէս սխալմամբ խմբագրուած է կարգերի մէջ:

ԺԲ) Յովհաննէս Վրդ. Սանահնեցի, «ԶՅանսկզբնական ծոցոյ Հօրն», զոգորմեան հանգստեան:

Այս երգի տների սկզբնատառերը կազմում են անունս Յակովբ:

Յակովբ Սանահնեցու մասին Ուռուսյեցի բաւականին կենսագրական տեղեկութիւններ է առիւն եւ ասում է, որ սա շատ գիտուն եւ ուսումնական մարդ էր, բայց չի ասում թէ սա շարական է գրել: Պատմում է թէ Սենեքերիմ Թագաւորի

հետ Կ. Պոլիս է եղել եւ Հայց. Եկեղեցու դաւանութիւնը պաշտպանել է Յոյն Իմաստասէրների մօտ:

Կարծում եմ սորա կրօնական գիտութիւնը եւ երգի սկզբնատառերի Յակովբ անուն կազմելը առիթ է տուել այս երգը սրան վերագրելու: Կարող է այս երգը Սանահնեցու գրչին պատկանել:

ԺԳ) Դրիգոր (Բ) Վկայասէր, որին շարականների ցանկը տալիս է «Խորհուրդն անճառ» եւ «Մեծարաշ» երգերը:

Դրիգոր Վկայասիրի եկեղեցական բարեկարգութեան եւ Թարգմանութեանց մասին գրում են Ուռուսյեցին, Գանձակեցին եւ Վարդան Բարձրեղեցին, բայց նրա գրած շարականների մասին ոչ մի ակնարկութիւն չկայ:

Այս երկու երգերի լեզուն ու ոճը ԺԲ. Պարսեան, այնպէս որ ոչ մի արգելք չունիք նրանք համարելու:

Մօտից ծանօթ լինելու համար իւրաքանչիւրից մի մի տուն յառաջ բերենք: Կանոնը Աւետեաց Ս. Աճառնի:

«Խորհուրդն անճառ ծածկեալն յազգաց եւ յաւիտեանց յայտնեցաւ իշմամբ հրեշտակագիրն այսօր առ կոյսն Մարիամ, զոր առ Տէր ունիմք բարեխօս վասն անձանց մերոց» (էջ 12):

«Մեծարաշ այս խորհուրդ աւանդութեամբ առ մեզ հասեալ, զոր հոգւոյ լուստառուն 'ի պաշտպանէ իւրմէ լուեալ, եթէ ասն մեծ է այսօր իմոյ դառուն որ ի յերկին» (էջ 364):

ԺԴ) Յովհաննէս Վարդապետ, Սարկաւազ կոչեցեալ, Ղեռնդեանց Մանկունքն՝ «Պայծառացան այսօր»:

«... Արար եւ շարական Ղեռնդեանց (Յովհ. Սարկ.) քաղցր եղանակաւ, յարմար բանիւ, որոյ սկիզբն է այս. «Պայծառացան այսօր սուրբ եկեղեցիք», ասում է Կիրակոս Գանձակեցին (էջ 63):

Սրանից էլ լաւ ցուցմունք չի կարող հաստատել շարականների ցանկի յիշատակութիւնը Այս շարականի մէջ մենք տեսնում ենք եւ ԺԲ. Պարսեանի գրութիւնը թէ ինչպէս ցրուած էին եւ ազատւում է որ Աճ հաւաքէ: Կարծես մի նոր նսայի է հայոց համար:

ԳՐԱԽՕՍԱԿՄԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ԶԵՆԱԳՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ԺԳ. ԴԱՐ

Բարեխիշառակ Լևոն Ս. Խաչիկեանի աշխատանքով 1950 ին լոյս տեսաւ ԺԳ. Դարի Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններուն ժողովածուն: Յաջորդ տարին հրատարակուեցաւ Երջանկայիշատակ Դարեգին Կաթողիկոս Յովսէփեանի կազմած Զեռագրաց Յիշատակարաններու ժողովածուն Առաջին Հատորը՝ Ե. դարէն մինչև 1250 թուականը: Այդ օրէն ասդին ակնդէտ կը պատկերէ որ լոյս տեսնէր 1251-1300, կիսադարեան շրջանին օրինակուած հայերէն ձեռագիրներու յիշատակարաններուն հաւաքածոն: Յիշեալ շրջանը, իր մեծ կարեւորութեամբ մատենագրական և մանրակարչական տեսակէտէ, յոյժ ցանկալի կը դարձնէր այդ պակասին շուտափոյթ լրացումը: Անցան տասնամեակներ, և այդ տենչալի հատորը դեռ կը մնար խաւարի մէջ:

Դիւրին է այժմ երևակայել մեր ուրախութիւնը երբ ստացանք մեր ըղձալին՝ ԺԳ. Դարի Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններուն հոյակապ հատորը, զոր կազմած է Ա. Ս. Մաթեվոսեան՝ ծանր և լուրջ աշխատանքով (Տպ. 1984, Երևան): Հատորին սկիզբը՝ կազմողին կողմէ դրուած է «Հայերէն Զեռագրերի Յիշատակարանների ժողովածուները» խորագրով հակիրճ տեսութիւն մը (էջ 5-11): Յիշատակարաններու շարքը կը սկսի յաջորդ էջէն և կը շարունակուի մինչև

էջ 942, և կը պարունակէ 832 կտոր: Ասոնցմէ թիւ 1-707 թուագրեալ են 1201-1300, մնացեալները՝ 708-832 անթուական են, բայց կը նկատուին յատուկ ԺԳ. Դարին:

Աշխատասիրողը զետեղած է տողատակի բազմաթիւ ծանօթութիւններ և բացատրութիւններ, որոնք կ'օգնեն ընթերցողին աւելի յստակօրէն հասկնալու այս կամ այն բառը կամ նախադասութիւնը:

Ծանկերը կ'ընդգրկեն 944-987 էջերը, հետեւեալ բաժանումներով: Ծանկ օգտագործուած աղբիւրների (944-951): Ծանկ Անձնանունների (952-979): Ծանկ Տեղանունների (980-985): Առարկայական Ծանկ (986-987):

Ա. Ս. Մաթեվոսեանի շնորհիւ, բնասէրները իրենց սեղանին վրայ կ'ունենան թանկագին հատոր մը, որ իր բովանդակած մեծարժէք յիշատակարաններով կու գայ կարեւոր նպօրէն նպաստելու մեր պատմութեան, մանրանկարչութեան և մատենագրութեան մարզերուն մէջ տարուող աշխատանքներուն:

Այստեղ աւելորդ չենք համարիր արձանագրել քանի մը նկատողութիւններ, որոնք թերեւ կրնան օգտակար ըլլալ ոմանց:

1. - Յիշատակարան թիւ 52. - Առանձին յօդուած նուիրած ենք Սրբոց Յակոբեանց թիւ 94 ձեռագրին: Տես Սիոն, 1961, էջ 74-75:

2. - էջ 97, անդ վերէն 16. «Սիրելի գնալ երանագի ջուն»: Պէտք է կարդալ Սիրելի գնալ ինչ անհոգի ջուն:

3. - էջ 117, անդ վերէն 4, «Փնադմայ», հարցանիշով: Ընդհիլի է Փարզմայնայ. քաղաքի անուն է, ուղղական՝ Փարզ-

«... զեկեղեցւոյ քոյ ցրուեալ մանկունս ժողովեալ յուրախութիւն զվայրատեալս արամութեամբ և արատաւաց զորդարեալ զղխմամբ...»

ՎԱՀԱՆ ԲԺՇԿԵԱՆ

(Մնացեալը յաջորդիւ՝ 9)